



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

27 Եպրեմբերի 2013 թ. № 237 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի № 225-Ա/1  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի՝ հրամայում եմ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի № 146-Ա/1 հրամանում փոփոխություն կատարելու մասին» № 225-Ա/1 հրամանի մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1. Հրամանի հավելվածի աղյուսակի 8-րդ կետից հետո լրացնել՝

<p>9. Երիտասարդական քաղաքականության ոլորտում լավագույնս դրսևորած երիտասարդներին (գիտնականներ, արվեստագետներ, ստեղծագործողներ և այլն) և երիտասարդական հասարակական կազմակերպություններին խրախուսական մրցանակներ, դրամական խրախուսումներ՝ ներառյալ հարկերը:</p>	<p>մինչև 200.000 ՀՀ դրամ:</p>
--	-------------------------------

  


ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ